Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-110[1]-03.10.2012-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում, 2-րդ և 3-րդ մասերում, 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերում, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերում, 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում «ամսական դրամական» բառերը փոխարինել «կենսաթոշակի չափը հաշվարկելու համար սույն օրենքով սահմանված կարգով որոշված դրամական» բառերով:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) վերնագրում «Ամսական դրամական» բառերը փոխարինել «Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար դրամական» բառերով,

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու (վերահաշվարկելու) համար դրամական բավարարումը որոշվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված ամսական դրամական բավարարման գումարի և դրանից պահված եկամտային հարկի տարբերության չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծով լրացում կատարել «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում՝ ամրագրելով, որ ծառայության նոր վայր տեղափոխվելու և միանվագ դրամական օգնությունների չափերը հաշվարկելու համար պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերը որոշվում են ՀՀ կառավարության	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	կողմից սահմանված պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերի ու դրանցից պահված եկամտային հարկի տարբերության չափով:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում՝ 2-րդ հոդվածով) վերախմբագրվող՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «ձևով ստացված եկամուտները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում՝ 2-րդ հոդվածով) վերախմբագրվող՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: